

1890

# ԲԱԶՄԱՎԵՊ

## ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ՀԱՅՈՒԹ ՀԱՅՐԱՅԻ

### ՀԱՅԿԱԿԱՆ Ք

ԱՇԽԱՋԱԲԱՐՁ

ԳՐԱ.ԲԱ.ՐԻ ԶԵՐ.ՔՈՎ. ԶԱ.ՐԳԱ.ՑՆԵԼՈՒ ԵՒ ԿԱ.ՆՈՒ.Ա.ԽՈՐԵԼՈՒ

ԵՒ ԳՐԱԲԱՐ ԼԵԶՈՒՆ

ԱՅԽԱՐՀԱԲԱՐԻ ՄԵԶ ԿԵՆԴԱԱՑՆԵԼՈՒ ԽՆԴԻՐՆ



իմից մեծ կարևորութիւն ունեցող հարկ մես կը  
պահանջէ, որ գասական հայերէնն՝ ապաշնորհ կեր-  
պով մահուան և յաւիտենական մոռացութեան չը-  
դատապարտենք, այլ ընդհակառակն, մշակենք և  
օգտուինք անտի. այս հարկս ոչ եթէ մեր բազմա-  
վասարկ թարգմանչաց քիրտն և մեր գէմ իրաւամբ  
յարուցանելիք բողոքն է, ոչ մեր հայրենեաց կորստեան սպանացող  
վտանգն, և ոչ իսկ աշխարհաբարին՝ իւր կենսատու բարունակէն  
կորուելու և գօսանալու երկիւղն, որոնք ըստ ինքեան են մի մի զո-  
րեղ պատճառներ. այլ մեր անցելոյն զրական պատմութեան ու-  
սութանափրելու անհրաժեշտ հարկն. Արդ, նախնեաց մատենագրու-  
թիւնն՝ ուղիղ և օգտակար կերպով ուսումնասիրելու համար՝ պէտք  
է նախ լաւ հասկանալ զայն և տեղեակ լինել մեր հին հայերէնի  
պէսպէս առմանցն և կիրառութեանցը. սակայն այս բանս անկարելի  
է, ըստ իս, առանց նախապէս ուսանելու զայն, թայց դժբաղջորէն  
քանիներ կան այժմ, որոնք մեր զրաւոր պատմագրութեան քննական

ուսումնասիրութեամբը պարապելու կը ձկտին, հաղիւ թէ ծայրիւ մատին ճաշակած լինելով զգրաբար լեզուն. որով շատ անգամ՝ կը պատահի, որ ուսումնասիրելի հեղինակին մոքէն դուրս՝ բոլորովին տարբեր մեկնութիւններ և եղբակացութիւններ յառաջ կը բերուին: Առ այս բաւական է օրինակ մի միայն մէջ բերել Մ. Խորենացւոյ Բ. Գրոց Ն՛Ա զիսուն մէջ, Արդամայ հարճին՝ Մանդուի մասին ըրած այս բացատրութիւնս. «Եւ զհարճ նորին, որ կարի չքնաղ էր գեղով և մնացեալ գնացիշք ուժից, զոր կոչեն Մանդու, ածել 'ի հարճութիւն Արտաշէսի», պէսպէս մեկնութիւններ տրուեցան Տփիսի լրագրաց մէջ, Ստեփանէ վարդապետի նոր թարգմանութեան առթիւ, և մին քան զմիւսն հանճարեղ. այսպէս որ՝ զէրակղիտէսս անգամ կարող են շարժել 'ի ծիծաղ. կարելի է, թէ նոյնչափ մեկնութիւններ ևս գեռ տրուին մեր քերթողահօր այդ բացատրութեան, թէ աչէտ և նա զայս ևեթ կը հասկնար և ուղել է հասկացնել. այսինքն է, հեզասահ կամ անընկուստ ձևնող, և ոչ թէ դանդաղ, կտմ յղի, և կամ կաղ. ինպէս կը կարծեն մեկնել կարծեցեալ հայկաբանք: Եւ յիրաւի, նախ դիտելու է, որ «մացեալ գնացիւք ոտից » բառերն իրեւ գովեստ արուած են Մանդուի: Բ. զլսութին անտեղի էր՝ յզի կամ կաղ կին մի ածել 'ի հարճութիւն Արտաշէսի: Գ. գեռ այսօր իսկ Հայոց մէջ այս տեսակ քալելն՝ իգական սեոին իրեն արտապին ձիրքերէն մին կը համարուի և կը գնահատուի:

Իսկ զարդվ մեր առաջննիւթին՝ մասնաւոր խրախուսանաց արժանի են ծայլակ ուկենէն դպրութեան ամսօրեայ Հանդիսին լեզուասէր խնամակալներն, որը կ'աշխատին մեր նախնեաց դասական լեզուն մօտալուս յօրհասէն ազատել և ժողովրդեան գէթ զրագէտ դասուն մէջ կենդանի և վառ պահել: Բայց փափաքելի էր, որ այդ եւ անդուն և նախանձայուղութեամբ լրորդուած գործիչներէն ունանք՝ երբեմն վարկապարագի տեսութեամբ՝ մեր միւս արդիւնաշտան նախնեաց մեզի աւանդած լեզուական գանձերն՝ իրեւ աւագ ծովուն մէջ չամային. ապա թէ ոչ՝ իրենք ևս այն սկզբան դէմ մեղանչած պիտի լինին, որուն համար կը մեղադրեն զայխարհաբարեանս. և յիրաւի, կարող է ըսել աշխարհաբարեան մի, եթէ Շնորհալիներուն և լամբրունացիներուն մեզի աւանդած լեզուն՝ որ աւելի մօտ է աշխարհաբարին և գործածելի, դուք 'ի բաց կ'արտաքսէք, ևս առաւել մենք իրաւունք ունինք արտաքսել զդասականը, որ մեզի զլսովին անմատչելի դարձել է: Բ. Զգուշանային, և իրենց անձնական տեսութեան համեմատ՝ զնորահնարըն և անսովորն՝ իրենց կողմանէ իրեւ գառական չներկայացընէին համբակաց: (Օրինակ մի միայն յիշենք, ձայշակի (հա. Ա. էջ 36) մէջ, փոխանակ նախնեաց բարգմաննուրին բառին բարգմանչուրին գրուած է, որ ըստ ինքեան թարգման արմօտականէն և թարգմանեմ բայէն չէ կարող առաջ գալ, այլ դուցէ թարգմանիչ ածանցէն.

սակայն դիտելու է, որ ամէն իչ վերջացող ածական անուանցմէ՝ ամէն ան, ամ թիւն վերջացող գոյական անուանք չեն կազմուիր. ապա թէ ոչ պիտի կարենայինք սրբիչն՝ շինել սրբուրիւն, կիզիչն՝ կիզուրիւն, յնամիչէն՝ յնամշուրիւն, սփոփիչն՝ սփոփուրիւն և այլն թւատի հետաքրիր էինք դիտնալ, թէ ով արդեօք Ե գարու թարգմանիշներէն գործածել է «Թարգմանչուրիւն, Բարբառարանն» (Dictionnaire) և նման դեռ ուրիշ բառեր, որք կը գտնուին ասու և անդ ձաւլակի մէջ. և թէ ինչ հիման վրայ հաստատուած. Յիշեալ հրատարակութեան մէջ (Հատ. Բ. Էջ 130—145) եղած խօսակցութիւնն, որոն վերնազիրն է «Բանք զիւյ շնորհ» Ս. Գ. պուետիկոսի մի տեսութեան համեմատ՝ իբր թէ բագրատունիք, Հիւրմիւզեանք, թովմանանեանք և Ալիշանեանք եղած լինին խանգարիչ նախնեաց գրաբարին՝ ի, ենց ինքնահնար բառերու և բացատրութեանց կազմութեամբ. Մակայն պէտք է ըսել, թէ այդ քաջախօսի գատողութիւնը՝ իւր խօսից համեմատ այն ժամանակ գուցէ հիմնաւոր պիտի լինէր, եթէ նա փոխանակ մուրացածոյ բառեր քովէ քով բերելով՝ երկու յօդուած կամ երգ ձևացնելու, իւր դատափետած հեղինակաց ինքնազիր կամ թարգմանական երկասիրութեանց նման, որպիսի են Հայկ, Միշտոն, իշխական, Մշակական և Դամբանական ձաւր Պոսիէի և այլն, գէթ մի միայն երկասիրութիւնն հրատարակած լինէր: Երկրորդ, համարելով իսկ, թէ նորա ենթագրութիւնն այս ինչ կամ այն անանուն բանաստեղծութեան մասին, յորմէ օրինակներ մէջ կը բերէ, ուղիղ ևս լիցէ, սակայն նորա գրած սկրդունքը՝ բոլորովին թիւր է և անընդունելի. որովհետեւ, նախ, առանձ-

1 Այս բառին հիզինակը՝ հետևեալ սկզբան վրայ հնարել և հիմնել է զայն այսինքն է, որովհետև Dictionnaire կը պարունակէ իւր մէջ ոչ միայն բառեր, այլ բացատրութիւններ ևս, և քերականական բոլոր կանոններն, որովք կը կազմուի բարբառն, ուստի բարբառաբան ըսելու է՝ քան թէ բառարան:

Արդ, այսպիսի զօրեղ բանավարութեամբ մի, ըստ ինքեան, պիտի կարենար ըսուիլ, թէ Dictionnaire, կը նշանակէ Բնուքիրութիւն, Տորբանանիւն, Չոփութիւն և այլն. օրովհետև այդ գիտութեանց տարերքն ևս կը պարունակուին յայնն: Բ. Դիտելու ենք, որ մի և նոյն բառը, թէպէտ և առած է այլ և այլ յաելուածներ և իմաստներ, բայց պահել է միշտ իւր բառական նշանակութիւնը՝ բառաւոր. օրինակ իմ Dictionnaire Biographique, Dictionnaire Géographique, Dictionnaire Économique և այլն: Ուրեմն որքան անտեղի է ըսել Բաբեռութիւն (այսինքն է լեզուարան) աշխարհութիւն, Բնուքութիւն, Այսպէս ևս անտեղի է նաև առանց յաելուածոց թարգմանել զայն բարբառաբան: Գ. Դիտելու է որ առան վերջացող հասարակ անուանքն, օրինակ իմն, Տապառն, Հանքիսուրն, Վարդապետուրն, Ընդհանրապէս յոդնակի նշանակութիւն ունին. որովհետև են պարունակի ոչ միոյ եեթ՝ այլ բազմաց: Արդ, այսպէս և բառբառուրն կը նշանակէ պարունակող լեզուաց, ինչպէս բառարանը՝ բառերու: Ուստի ըստ այսմ՝ որ և իցտ Dictionnaire պիտի լինէր՝ ի հարկէ բազմալեզուեան կամ բազմաբարբառ, նոյն իսկ առանց յաելուածոյս polyglotte, որ ոչ է առջի:

նականացմէ՝ ընդհանուր հետեւթիւն մի յառաջ բերելը՝ միշտ տրամաբանական չէ. երկրորդ, ինչպէս անցեալը՝ ներկային, այս պէտք և դասական լեզուն՝ պէտք է որ ծառայէ ներկային և ապա գային, և ոչ թէ բոլոր ներկայք և ապագայ սերունդք՝ պիտի փակուին ծառայական նմանութեամբ, ինչպէս նա կը կարծէ, անցեալ գրտեկանութեան և դասական լեզուին պարունակի մէջ։ Արդարեւ, զայս կը պահանջնեն մեզմէ այս նորանոր գիւտերն և զիտութիւնք, որը նոյնպէս նորակազմ բառերու և բացատրութեանց կը կարօտին, որպէս զի ուրիշին հաղորդուին, թէ վկարէ ըսել, թէ նոյն իսկ, յաւէտ յիշտատակաց արժանիթ արդմանի ըն՝ յայլ և այլ լեզուաց թարգմանութիւններ ըրած ժամանակ՝ երրեմն երրեմն նորանոր բառեր և բարդութիւններ կազմած չեն, զորս նոցա նախորդքը բնաւ գործածած չէին. ինչպէս և շատ մի օտարասեռ բառեր՝ պարզապէս հայերէն տառերու դարձուցած, որոնք ի սկզբան անդ՝ կը պակսէին մեր լեզուին մէջ։ Ոչ ոք որովհետեւ այս երկու կէտերս իսկ սույզ եղելու թիւններ են, և աւեների կը տեսնուին թէ յ. Գրոց և թէ ուրիշ թարգմանութեանց մէջ։ Դարձեալ, ով կարէ առանց անտեղութեան պահանջնել մեր նախնեացմէ յոգեկատաց, հեռագրուցեան, ձայնախօս գործոյն և գեռ ուրիշ գիւտից մեզի ընծայած նորակրանչ երևութից յարմար բացատրութիւններ. կամ ընդհակառակին չհիսանալ չ. Արսէն բագրատունուց ճարտար և գեղեցիկ նկարագրին վրայ. գ. զիտելու է, որ Միթթա ըեանք այն բաններն ըրին, զորս նախնաբար ըրած էին նորհացիք և լամբրոնացիք. այսինքն է, ոչ եթէ օտարաբանութիւններ հնարեցին, ոչ. այլ հայկական բառերէ՝ այլ այլ բարդութիւններ յօրինեցին, զորս կը պահանջէ բանաստեղծութիւնն ինքնին, որ թէպէտ և որդի է բնութեան և բնութեան հետ ծնած, սակայն յաճախ կ'ախսորժի բնականէն գուրս արշաւել, և դաղափարները լժորդած ժամանակ՝ բառերն ես կը հարկադրուի լժորդ ել իրարու հետ՝ բանաստեղծական աշխարհը բոլոր իւր երեակերպութեամբն և զիւթիշ զօրութեամբ ներկայացնելու համար.

Գրաբարի ինդիրն զմեզ հետացոյց փաքը ինչ յառաջարկեալ նիւթէն, սակայն մենք դառնանք տեսնել, թէ ինչ կէտեր ով կարէ արդի գրականութեան և աշխարհաբարի ներկայացուցիչ ազգային մասունչ օգտուիլ նախնեաց գրաբարէն։ Ընդհանուր կերպով իսոսելով, կարող է օգտուիլ այն ամէն բաներով, որոնց ձեռքով միշտ օգուտ կը քաղաք և կը զարգանայ եւրոպական ազգաց գիտառներէն և գեղեցիկ գպրութիւնը հին յունարէն և լատիններէն լեզուներէն, որոնք թէպէտ և կենդանին և ժողովրդական բարբառ լինելին արդէն ՚ի վաղուց դադարել են, բայց ոչ բնաւ լեզուական կենդանաբար արգասաւորութենէն։ Թէ և փոխուած է այսօր իրաւագիտութեան, թժկութեան և միւս գիտութեանց ընդհանուր վիճակն,

թէպէտ և չեն խօսիր Արիստոտէլ, Հիպակոկրատ, Լիգուրկոս և Դեմոսթենէս, Կիկերոն և կատոն, սակայն կենդանի են . և կը խօսին նոցա հնարած բառերն եւ բացատրութիւնք ո՞ր և է մասնագիտութեան մէջ, և արուեստական բառարաններն իսկ անոնցմով լի են. այսպէս նաև նորանոր զիւտերը՝ յունարէն բառերով կ'անուանաւ. կոչին, իսկ ՚ի մասնաւորք կարեմք և պարտիմք փոխ առնուլ մեր նախնեաց գրաբարէն՝ բոլոր այն բուսաբանական, կենդանաբանական, հանգարանական, քաղաքական և ելեղցական, զինուորական և հրիգադորական, բժշկական, և աշխարհագրական, ազգականութեանց, և այն, բառեր, որոնք աւելի իմաստալից են և ճիշգ: Բ.. Այն ածական և գոյական բառեց, ինչպէս և բայերու բարդութիւնքն, որը աւելի հարուստ գաղափարներ կ'արտայայտեն և ընդարձակ բացատրութեանց տեղ կը բռնեն. Գ. Առնուլ և վարել բոլոր այն հայատիպ սճերն և ասութիւններն, այն երգման և հեգնական ձևերն, այն բացադանյութիւններն և ժողովրդական առածներն, որոնք անհամեմատ կերպով ազգու են, վսեմ և բռն հայութեան ոգի: Կը ներշնչեն ՚ի մեզ. Միով բանիւ, փոխ առնուլ և գործածել այն ամէն իկ և ոչկ և ակ վերջացող փափուկ և գողարիկ նուազական բառերն, որը կարծէք թէ ժողովրդական բարբառէն առաջ եկած են, և գարձեալ ժողովրդական բարբառ լինելու կամ զախարհաբարը քաղցրացնելու՝ ամենայարմար են: Արդ, սաքա առհասարակ և սոքա միայն կարող են ազնուացնել գերութեան և ստրկութեան մէջ մաշուած ժողովրդեան մի՛ առմիկ և նուաստ արտայայտութիւնները: Այս բանիս մէջ՝ մասնաւոր փոյթունեցել են վենետիկ և Վիեննայի Միխմարեանք, ինչպէս կը վկայէ և յամին 1889 դեկտ. 34 հրատարակեալ «Արձագանգի» մէջ Ն. Գ. յօդուածագիրն: Իսկ յօտարաց՝ նախ զբոյնս իբրև գեղցիկ գուռզութեան և ինքնանանաշութեան և ազգասիրութեան օրինակ ունինք զիմացնիս: Արդ, սոքա երբ իրենց անկախութիւնը գեռ նոր ձեռք բերել էին, կ'ըսուի, թէ նոցա աշխարհաբար լեզուն՝ թրբական բառերու և բացատրութեանց խառնակոյտ մի էր. իսկ այժմ ոչ միայն մաքրուած է, չնորհիւ հին յունարէնի, բոլոր իւր օտարաբանութիւններէն, այլ այնպիսի անհաւատալի զարգացման հասած է, որուն վրայ ոչ միայն Յոյնք՝ այլ նոյն իսկ յունասէքը և յունացէաք առ հասարակ կը զարմանան. մանաւանդ կ'ըսուի թէ մինչև անգամ Պլուտարքոսի լեզուով մատենագրողներ կան: Արդ, ես համոզեալ եմ, թէ այդ ազգն և լեզուն՝ որ գարերով թրբական ազգեցութեան ներքեն ենթարկուած և բոլորովին խանգարուած էր իւր նախնեաց բարեմասնութիւններէն, այնպէս շուտով չափիտ կարենար վերադառնալ առ նոյնա, եթէ իւր անմահանուն մատենագիրներն և գասական լեզուն ջւնենար առ ձեռն պատրաստ, որ

իւր դիւթական զօրութեան հետ՝ արդասաւորութիւն ևս պատճառեց նոր սերնդեան և պիտի պատճառէ, վասն զի նոքա կը սիրեն և կը մշակեն զայն :

Սակայն թողունք Եղյներն և տեսնենք, թէ արևմտեան և արևելեան Հայոցս արդի գրականութիւնն իւր ծնած օրէն մինչև ցայտօր՝ որքան օգուտ քաղել է մեր Հայկական կոչուած նախնի գրաբարէն, և որքան զարգացել: Ըսուած է և կ'ըսուի միջա՝ վերջնոցս համար, թէ 80-40 տարիներու մէջ՝ մեծ յառաջդիմութիւն ըրած են, և ստուգիւ այս անուրանալի է: Սակայն դիտելու է, որ այլ ինչ է դիտական և տընտեսական յառաջդիմութիւնն և այլ լեզուականն: Այս վերջինս՝ թէպէտ և ընդհանրապէս զուգակից եղած է առաջնոյն՝ մարդկային ազգի պատմութեան մէջ, բայց ունեցել է երբեմն և կարէ ունենալ նաև իւր բացառութիւններն և խոտորմունքն այն ընդհանրական օրէնքէն, եթէ լաւ դիտած ենք անմիջապէս նորա յարակից պարագաներն: Արդ, նաև դ և Ե դարուց մէջ ունեցաւ Յունական ազգը Բիւզանդիոնի և Ոթէնքի վառարաններուն մէջ մեծանուն ճարտասաններ և մատենագիրներ, յորոց մին էր և Հայկազն Պրոյերեսփոս կամ Պարոյր, զոր Եւնաբիոսի եւ Գր. Նազիանզացւոյ վկայութեան համեմատ, Հռովմ՝ թագաւոր ճարտասանից անուանեց, և պղնձաձոյլ արձանով անմահացոյց, որոնք բարյապէս ապականուած և յետամթայ այդ գարերում իսկ՝ պերիկեան դարուն ծաղկող մատենագրաց նըման և ատտիկեան բարբառով երկասիրութիւններ ընծայեցին. այն պէս որ՝ Երազմոս անգամ առանց խղճալու՝ զԱ. Բարսեղ վեր կը դասէր քան զիւմոսթենէս: Սոյնը պատահեցաւ նոյնպէս ԺԵ գարուն յեւրոպա, երբ յօւնական գաղթականութիւնն հասաւ անդ և Երազմոսներ ընծայեց գեղեցիկ դպրութեան. այսպէս նաև դարերէ վերջ եղան վիդայի պէս քաջ լատինագէտք, որոնք Որատիոսի և Վիրգիլիոսի լեզուով երգեր և Դիւցազներգութիւններ ևս շարադրեցին: Սակայն հանդերձ այսու ոչ ոք կարող է ըսել, թէ նոյն լեզուական արդինքն ունեցան վերոյիշեալ դարուց և յետին ժամանակի մատենագիրը, ինչ որ ունեցան Պիրիկեանք և Որատիոսեանք և Վիրգիլուսանք: Օրովհետեւ սոցա լեզուն՝ իրենց հանճարոյն և դարու ստեղծագործութեանն աւելի արգասիք էր, իսկ նոցայն՝ պարզապէս մօրդ կեղէն ջանից և ծառայական հետեղութեան: Այսպէս ուրեմն, որոնք լաւ տեղեակ են Ռուսա-Հայոց նոր գլուխութեան պատմութեանը, պարտին յիշել, թէ զեռ մի քանի տասնեակ տարիներ յառաջ երբ երեանէն, կ. Պոլսէն և ՚ի Պարսկահայոց հայրենասէր հայեր անցան ՚ի Ռուսիա, շատ տեղ՝ ինչպէս նաև ՚ի Տիգիս հայերէն խօսիլն իսկ մոռցուած գտան: Ռւստի մէկ կողմէն վերոյիշեալ եկաւորաց գաւառաբարբառներուն օգնութեամբ, իսկ միւս կողմէն այլ նախնեաց գրաբարի ձեռքով, որ եղրասեան սուրբ հրոյն պէս թէպէտև ՚ի ջուր

լճացեալ փոխուած էր, բայց կը պահէր տակաւին իւր մէջ այն պքան-  
չելագործ զօրութիւնը՝ վերստին արծարծելու զժողովրդական բար-  
բառն, կազմուեցաւ արդի Ռուսահայ կամ Տփղիսի աշխարհաբարն.  
որ թէպէտև ուշ ծնաւ, բայց շուտով տիրեց նոցա և իւր մէջ ընկդմեց:  
Բայց որովհետև մէկ կողմէն յիշեալ գտաւուարաբրառներն, իսկ միւս  
կողմէն այլ նոցա արմատ զբարարն, որուն վրայ կազմուեցաւ այդ  
աշխարհաբարն, աւելի մաքուր էին և աւելի հայկական, բնականա-  
պէս նոր կազմակերպուած լեզուն ես, համեմատութեամբ արևմտեան  
ժամանակակից աշխարհաբարին, աւելի մտ էր գրաբարի կանոնաց և  
աւելի մաքուր՝ գէթ բառերու կազմութեամբ, 'ի բաց առեալ քանի  
մի զործածութիւններ, (օրինակ իմ ների և ներից յոգնակի սե-  
աւկանները) որոնք գրաբարի մէջ հազուագիւտ են և միայն վերոյի-  
շեալ գտաւուականաց կամ լաւ ևս վրացերենի ազդեցութեանն արգա-  
սիք համսրելի են:

Առանց տարակուսի է և այս, թէ այդ աշխարհաբարն, կանոնաւոր  
կերպով, մատենագրութեան գործի դարձնելու համար՝ եղան նոցա  
կողմէնէ մեծամեծ զոհողովթիւններ և անմահանուն զոհեր, ոյք սուլ-  
ժամանակի մէջ երկայն տարիներու զործ կատարեցին և զգալի կեր-  
պով յառաջացուցին զայն: Բայց թէ յետ այնորիկ նոյն ուղղութեամբ  
և նոյն ջանքով շարունակեց արգեգ Ռուսահայոց աշխարհաբարն իւր  
յառաջադէմ զարգացման ուրախաւէտ լինթացքն, եթէ ոչ. թող նե-  
րուի ինձ ասել, այս և ոչ. և այս, կարծեմ, թէ առանց հակասութեան:  
Բացատրեմ իմ միաժամ. շարունակեց անտարակոյս, որովհետև մէկ  
կողմէն իւր ուսումնասէր անձանց ձեռքով, որոնք իրենց ազգակից-  
ներէն աւելի՝ գերմանական վառարաններէն ընդունեցան մասնագի-  
տական ուսումնաց սերմաննքն և ուսումնասիրելու ոճն, ընծայեց գրեթէ  
անընդհատ յաջորդութեամբ, թէպէտ և գանդաղակայլ ընթացիւք,  
լեզուարանական, մատենագրական և քննադատական շարք մի երկա-  
սիրութեանց. իսկ միւս կողմէն այլ նոցա մամուլը՝ պարբերական,  
ամսական և շարաթական թերթերու և օրագրաց միջոցով՝ ջանաց ծա-  
ւալել և ծաւալեց իրաք հայ հասարակութեան մէջ ինքնաճանաշու-  
թեան, անտեսագիտութեան, կենսական ապրուստի և ժամանակիս  
պահանջած հարկաւոր գաղափարներն, յորս մեծագոյն արդիւնք  
ունեցաւ մասնաւորապէս Գրիգոր Արծրունի. և զայս կ'ըսեմ պար-  
զապէս ծամարտութեան և ոչ զգուանաց համար:

Բայց այն օրէն 'ի վեր՝ երբ ժողովրդականաց (publicistes) ձեռ-  
քով գրուեցաւ այս նշանաբանս. թէ Այսուհետև պէտք է բողոք լրզ-  
գրաբարն ո՞ր և է կերպով, ժողովրդեան մակերևուրին հաւասա-  
րելու և նորա բազմակողմեան պիտոյքն հոգալու համար. այն  
օրէն 'ի վեր՝ երբ գործադրութեամբ իսկ գրեթէ ընդհանուր գարձաւ  
այդ սկզբունքն, և գրաբարի ուսումն ևս բարձաւ 'ի միջոյ, այնուհետեւ

աշխարհաբար լեզուն հատու իւր կենսունակ արմատէն և դադրեցաւ գէթ լեզուական այն զարդացմանէն, զոր կը իսոստանայր իւր ընթացից առաջին քայլափոխն ըրած ժամանակ ։ Սակայն այս բաւական չէ. գիտելու ենք և այն, որ մէկ կողմէն գրաբարի արտաքառման, իսկ միւս կողմէն ժամանակեան գիտելեաց և ծանօթութեանց աճումն և զօրաւոր պահանջը՝ ստիպեցին թէ մեր լրագրապետներն և թէ մատենագիրները՝ կամ օտար բառեր և բացատրութիւններ փոխ առնուլ, զանոնք բացատրելու համար, որուն անպայման՝ մանաւանդ. թէ տարապայման գործադրութեամբը՝ ողբերգին արեւելեան մամցյն մէջ, աւելի կամ պակաս, բազմահոյք գերմաներէնի, ուսւերնի և գաղղիերնի. և կամ յաճախեցին նոցա զրուածոց մէջ աղ: քատին կրկնաբանութիւնք: Եւ ստուգիւ, իրեւ ապացոց այս կրկնեղելութեանց առնունք արևելեան Հայոց երեցագոյն, լաւագոյն և հեղինակութիւն ունեցող թերթն, այս ինքն է, «Մշակ»: Այդ, թողլվալ այլեայլ կողմերէն եկած և տարբեր գաւառականներով գրուած նամակներն, և նորու առաջնորդով յօդուածները միայն աշխէ անցընելով, կը տեսնենք երկու ակնյայտնի իրողութիւններ. նախ, որ առաջին տարիներուն մէջ հրատարակուած թերթերն համեմատութեամբ աւելի հայերէն և մաքուր լեզուով յուրած կ'երեկին, քան թէ վերջի մի քանի տարիներուս մէջ գրուածներն: Բ. Մի և նոյն առաջնորդով յօդուածի մէջ և մի և նոյն գաղափարը՝ բազմից կրկնաւած է, միշտ մի և նոյն բառերով և բացատրութեամբ, իրը թէ նոյնանիշ հայերէն բառեր և բացատրութիւններ լինէն: Լաւ հասկնանք, իմ խօսքս մեր արդիւնաշատ ժողովրդականը մեղադրելու համար չէ, որ լաւ ճանաչել է հայ հասարակութեան միջասահման դատու հասկացողութեան չափն, և գուցէ թէ այդ շահաւաէտ գաղափարներ՝ նոցա մոտաց մէջ տպաւորելու համար այնպէս ըրած է, ցաւցնելով հասկացող ընթերցողաց զլուխներն. և թէ Մշակէն դուրս կան ուրիշ թերթերն ես, յոր կարեի չէ չնկատել մի և նոյն երևոյթներն: Այլ ես կը ցանկայի միայն ընդհանուր կերպով այդպիսի տիսուր երևութից չափազանցութեանը դէմ համեստ և օրինաւոր բողք մը ընել, առանց այս կամ այն զորդիչի անձնասիրութիւնն ուղելու վիրաւորել երկրորդ, վերոյիշեալ երևոյթներուն՝ սկզբնապատճառքը մատնանիշ ցուցանել:

Որո՞նք են արգեօք այդ պատճառքը, թերես հարցանէ ուսւահայն, և ես առանց սխալելու կարող եմ պատրասխանել, թէ է այն մեծ ատելութիւնը, զոր ունին նոքա զէպ ի նախնեաց գրաբարը: Յիրակի, նոքա առ գուրս պատրաստ ունելով մեր նախնեաց ոսկեղջէն գանձերը՝ կ'ընտրեն օտարներէն կապար կամ անագ մուրալ. և այսպիսի մուրացկանութիւն մի, որ մեր երեսը կը շառագունէ և ոսկերաց սարսուռ կը պատճառէ, նոցա համար, ընդհակառակն, ամենահետ և ամենաբնական բան գարձել է. որովհետե նոքա գերմաններէնի և

ռուսերենի կտմ մի ուրիշ օտար լեզուի հետ՝ աւելի ծանօթութիւն ունին և կը մշակեն իսկ, քան թէ մեր մայրենի և դասական լեզուին. և այս է, ըստ իս, և պիտի լինի եթէ ոչ միակ՝ այլ զլիսաւոր պատճառն արևելեան Հայոց աշխարհաբարի՝ ոչ միայն անզգայի զարգացմանն, այլ և օտարացման. Աստի յառաջ եկան, կու զան և գեռ պիտի զան հայերէն լեզուի անարատութեան սպառնացող բիւր աղէտք և աւեր- մունք, զորս յայտնապէս կը տեսնենք, բայց չկարեմք զարմանել:

Արդարն, գրաբարի դէմ մնուցած ատելութեան միասարեր այն սկզբունքն և նոցա անմիջական հետեանքներն՝ երբեմն ՚ի ծածուկ և երբեմն յայտնի կերպով յերեան կու զան Տփղիսի հրատարակու- թեանց արբանեկող այլնայլ գործիչներու ձեռքով, որոնք մերթ կը գոշեն. Գրաբարը մեզի անմատչելի է. - Նախնեաց երկասիրու- թիւններեն մէջ բերուած տեղեաց յիշատակուրիւնները պէտք է աշխարհաբար ներկայացնել. - Նախնեաց մատեանքը պէտք է յաշխարհաբ որ դարձնել, և այլ ուրիշ յուսահատ ձայներ. Բայց թէ ոյք են նախնեաց մատենագրութիւնքը յաշխարհաբարի վերա- ծողներն և որպիսի ճշգրտեամբ. կարէք գուշակել, նկատելով, որ այդ թարգմանիչներն են այն հասարակութեան անհատներն, որուն գիմաց՝ գրաբարն արդէն իւր նշանակութիւնը կորուսել է և անմատ- չելի գարձել եւ մերթ այլ հանդիպելով քննական կամ լրջօրէն դրուած յօդուածի մի կամ երկասիրութեան, որ քերականական և տրամաբանական կանոնաց համեմատ և զուտ հայերէն լեզուով գրուած է, կը սկսին հրապարակու անգամ իրենց տրտունն յայտ- նել և ըսել. Գրաբար է - անհասկանալի է: իսկ եթէ կը հարցնեք, թէ ինչ բանով գրաբար է: Որովհեան օտար բառեր և բացատրու- թիւններ շիներկացներ. որովհեան ֆերականական կոնոնաց հա- կառակ և ըստ կամ եղած կիրառութեամբը աղաւաղած չէ լեզուն, որոնց մէջ կը կարծուի միայն գտնել աշխարհաբարի էւթիւնն և զյութիւնը: Ես կը թողում այլոց դատել, թէ այսպիսի պարագայից և այսօրինակ վարձանց մէջ ով է յանցաւորն. տրտոնացն արգեօք, եթէ ընդհակառակն. այլ զայս միայն կ'ըսեմ, թէ նոյն իսկ որ և է քաղաքակրթեալ ազգի մէջ ամէն տևումնական Հանդէսք և օրու- թերժք մի և նոյն ոճով և լեզուով չեն գրուիր, ինչպէս կը կարծեն և կը պահանջեն այդ գրագէտներն. այլ հեղինակաց նոցա ձեռնար- կած նիւթոց և զանոնք ընթերցող հասարակութեան վիճակին և հաս- կացողութեան համեմատ. և թէ այդպիսի ներհակակիր բաղըներ և տրտունք՝ ուրիշ նշանակութիւն չկարեն ունենալ, բայց եթէ ցուցա- նել ակներե, թէ այնպիսիք որպան տեղեկութիւն և յարմարութիւն ու- նին մեր և եւրոպական գրականութիւնը գատելու մասին: Աւստի ա- մելիլաւ կը լինէր, որ այդպիսիներ հետամուտլինէին փոքրիկ քաղաքաց մէջ և ստորին ժողովրդեան համար. նոցա լեզուով անտեսագիտական

առանձին թերթեր հրատարակէին, քանի թէ պահանջել վարկպարագի, որ բարող ազգային մամնւն և գրագէտ դասը գաւառական լեզուով խօսին և գրեն, որ ոչ միայն անպատշաճ է, այլ ունի և պէսպէս գժուարութիւն։

Շարունակելի

Հ. ԲԱՐԵՆԸ. ՍԱՐԳԻՍՆԵՐ

### ԳԵՂԱՄԱՅՈՒԹ ԾՈՎՆ

ԵՒ

ՍԵՒԱՆ ԿԱՄ ՍԵՒՎԱՆՔ

Թողլով ճեպընթաց կառքին ճանապարհի վրայ դտնուած բարձրագիր գիւղորէքը հանգերծ իրենց սառնամնեզք և սակաւամարդութեամբ, սկսանք իշնել Արեգունի լերանց և բլրոց գօտուոյն հարաւային կողին վրային՝ Դեռ խաւարն զմեզ կը պատեր, թէպէտ իւրաքանչիւր անուին հոլովելուն և գէպ ՚ի յառաջ ամէն մի նոր շրջան ընելնուու կը զգոյինք միշտ թէ ահա անոր ազջամշջին թագաւորութիւնն կ'ոչնչանայ, և կը ծագի ճաճանչագեղ լրտասնշցյլ արեգակն՝ զարթուցանելու և կենդանացնելու բոլոր տիեզերքս ։ Եւ ահա զմեզ շրջապատող լերինք տակաւ տակաւ կը սկսին ցածնալ և յանկարծ կարծես աներևոյթ ճեւք մը մէկդի տանելով աալնենիս տարածուած մոխրագոյն զանգուածը, կը տեսնենք եէօքչայ լիին ընդորձակ տարածութիւնն շրջապատեալ բարձրաբերծ լերանց շղայիւր, ինձ այնպէս կը թուէր, թէ մի բոպէի մէջ փոխագրուուծ ըլլամ « նէապօլսոյ ծոցոյն » քավ, ինչակէ կըսէ Ուվարով կոմսութիւն իւր հովհասու վրայ րրած դիտողութեանց մէջ, այնպէս յստակ, ինչ և գեղեցիկ էր առ, ջնինիս տարածուած ջրային մակերեսոյթն։

Մարդ չիկրնար ինքդինքը զապելի ինքնայօսար զարմացական բացագանցութիւնն մը ը ընելէն՝ բնութեան այսպիսի անկարծելի փոփոխութեան վրայ, եղբ յետ երկար ուզենորութեան բարձր լերանց միջնով որը իւրաքու վրայ բարձրանալով հորիզոնը կ'ամփոփէին, և ահա կը տեսնես յանկարծ հորիզոնին մէջ կորսուած, անծիր և ընդարձակ տարածութիւնն, որ խաբելու չափ ծովու գաղափար կու տայ, զոր անշուշու չես յուսար տեսնել այն կողմերը։

Հայերն մեր այս նկարագրած լիճը Ան-վանքի կամ Սևանայ ծով կը կոչին, որ սակայ կը յիշատակուի հայկական պատմագրութեանց մէջ, յորս ուրիշ անուն մը ալ կը ստանայ և գեղամայ ծով», ըստ հին աւանդութեան՝ Ամասիայի գեղամ որդւոյն անուամբ կոչուած։

Սոյն լիճն կը գտնուի վեց ու կէս հազար ստնաշափ բարձրութեան